ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«ԵՊՀ-ԷԱՃՕՁԲ-24/08» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ԵՊՀ Հիմնադրամի կարիքների համար ուղևորափոխադրումների ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

«27» դեկտեմբերի 2023 թ.
«08» հունվարի 2024 թ.,
ժամը 11:00

հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սարգսյան՝ (Գնահատող հանձնաժողովի նախագահ),

հանձնաժողովի անդամներ՝

Ա. Անտաշյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

Ա. Ավետիսյան՝ (Գնահատող հանձնաժողովի անդամ),

հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Բաղալյան՝ (Գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Տեղեկատվություն՝ «ԵՊՀ-ԷԱՃՕՁԲ-24/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2023 թ-ի դեկտեմբերի 26-ին ժամը 10:00-ին:

Գնման ընթացակարգի հակադարձ աճուրդը մեկնարկել է 2023 թ-ի դեկտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին, ավարտվել է 2023թ-ի դեկտեմբերի 27-ին ժամը 10:30:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե, հեռ.
1	**ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ**	ք.Երևան, Սայաթ-Նովա 19, Անի պլազա Բիզնես Կենտրոն 4 հեռախոսահամարն է՝ 010589000
2	**Վագտրանս ՍՊԸ**	Ք. Աբովյան, Հանրապետության 14/1 հեռախոսահամարն է՝ 93192922

3. Տեղեկատվություն յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին.

Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդում մասնակիցները ներկայացրել են հետևյալ վերջնական գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	*Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
7	1	**ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ**	5100000	5100000	0 %	5100000	
8	1	**Վագտրանս ՍՊԸ**	11250000	13800000	0 %	13800000	Մերժված

* Մերժման հիմք՝ նախահաշվային գնի գերազանցում:

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգի) 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկատվություն հակադարձ աճուրդի արդյունքում (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) մասնակիցներից ստացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, հրավերի պահանջներին դրանց համապատասխանության մասին:

«Էլիտբաս» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը՝ տեղեկագրում ԷԱՃ համակարգի միջոցով հրապարակել հայտարարություն չկայացած գնման ընթացակարգի մասին՝1-6-րդ չափաբաժինների համար:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետը՝ տեղեկագրում ԷԱՃ համակարգի միջոցով հրապարակել հայտարարություն չկայացած գնման ընթացակարգի մասին՝ 8-րդ չափաբաժնի համար:

7. Տեղեկատվություն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած /ընտրված/ ճանաչել՝

N	Մասնակցի անվանում	Չափաբաժնի համար
1	**ԷԼԻՏԲԱՍ ՍՊԸ**	7

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տեղեկատվություն գնահատման արդյունքների մասին

9.1. Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ 7-րդ չափաբաժնի համար և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ ԷԱՃ-ի կազմակերպման կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Տեղեկություն՝ հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

Անհրաժեշտության դեպքում «ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/08» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կհրավիրվի անգործության ժամկետի ավարտի հաջորդող աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ)՝ _____ Ա. Սարգսյան

Անդամներ՝ _____ Ա. Անտաշյան

_____ Ա. Ավետիսյան

Քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան